

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԿԻՑ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով (այսուհետ Աշխատակարգ) սահմանվում է ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովին (այսուհետ Հանձնաժողով) կից փոքր և միջին ձեռնարկատերերի խնդիրների քննարկման աշխատանքային խմբի (այսուհետ՝ Աշխատանքային խումբ) գործունեության կարգը, որոնք բխում են և չեն կարող հակասել «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքին, Ազգային ժողովի 2017 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» ԱԺՈ-267-Ն որոշմանը:
2. Աշխատանքային խումբը հասարակական հիմունքներով գործող Հանձնաժողովին կից փոքր և միջին ձեռնարկատիրության (այսուհետ ՓՄՁ) շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների (կամ դրանցից ստեղծված կոալիցիաների), առևտրաարդյունաբերական պալատների (այսուհետ Կազմակերպություններ) և Հանձնաժողովի միջև ՓՄՁ շահերին առնչվող օրենսդրական խնդիրների շուրջ երկխոսությունն ապահովող խորհրդակցական հարթակ է:
3. Սույն Աշխատանքային խմբի ստեղծման համար հիմք է հանդիսացել 2019թ-ի փետրվարի 15-ին Հանձնաժողովի նախագահի և ՓՄՁ շահերը ներկայացնող թվով վեց Կազմակերպությունների միջև ստորագրված «ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովին կից ՓՄՁ երկխոսության հարթակ ստեղծելու» մասին հուշագիրը:

II. ԱՇխԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՇխԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Աշխատանքային խումբն իր աշխատանքները կամակերպում է նիստերի միջոցով:
5. Աշխատանքային խումբն իրավունք ունի՝
 - 5.1. անհրաժեշտության դեպքում դիմել է Հանձնաժողովի նախագահին, որպեսզի վերջինիս հրավերով Աշխատանքային խմբի նիստերին մասնակցեն ՀՀ պետական, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին, Ազգային ժողովի մշտական գործող հանձնաժողովի նախագահներին, անկախ փորձագետներին կամ այլ շահագրգիռ անձանց՝ Աշխատանքային խմբի նիստին առաջադրված խնդիրների համատեղ քննարկման նպատակով,
 - 5.2. Աշխատանքային խմբում ընդգրկված Հանձնաժողովի անդամ հանդիսացող պատգամավորների միջոցով ԱԺ-ի քննարկմանը ներկայացնելու օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ ՓՄՁ-ների զարգացմանը խոչընդոտող խնդիրների և հիմնահարցերի լուծման վերաբերյալ,
 - 5.3. դիմելու Հանձնաժողովի նախագահին, որպեսզի վերջինիս դիմումով ՀՀ պետական մարմիններից՝ ՓՄՁ-ներին առնչվող անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով:
6. Աշխատանքային խմբի հերթական նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ:
7. Անհրաժեշտության դեպքում կարող են հրավիրվել արտահերթ նիստեր՝ Աշխատանքային խմբի ղեկավարի կամ Աշխատանքային խմբի անդամների առնվազն 1/3-ի նախաձեռնությամբ:
8. Աշխատանքային խմբի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է Աշխատանքային խմբի անդամների 2/3-ը:
9. Աշխատանքային խմբի քննարկմանը հարցեր կարող է ներկայացնել Աշխատանքային խմբի յուրաքանչյուր անդամ, ներկայացվելիք հարցը նախօրոք ներկայացնելով Աշխատանքային խմբի քարտուղարությանը (այսուհետ՝ Քարտուղարություն):
10. Աշխատանքային խմբի նիստի օրակարգի նախագիծը և անհրաժեշտ այլ փաստաթղթերը Քարտուղարությունը Աշխատանքային խմբի անդամներին է տրամադրում հերթական նիստից առնվազն 5 օր առաջ:

11. Աշխատանքային խմբի յուրաքանչյուր նիստ սկսվում է օրակարգի հաստատմամբ և նախորդ նիստի ընթացքում քննարկված հարցերի մասին Քարտուղարության զեկուցմամբ:
12. Աշխատանքային խմբի նիստի օրակարգում ընդգրկված հարցերը ներկայացնում է Քարտուղարությունը կամ հարցն առաջարկող խմբի անդամը:
13. Հարցի քննարկման ընթացքում Աշխատանքային խմբի անդամների կողմից նոր առաջարկներ ներկայացնելու կամ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու անհրաժեշտություն առաջանալու դեպքում հարցի քննարկումը տեղափոխվում է հաջորդ նիստ:
14. Աշխատանքային խմբի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, որոնք Աշխատանքային խմբի ղեկավարի կողմից ներկայացվում են Հանձնաժողովին:
15. Աշխատանքային խմբի որոշումներն Հանձնաժողովի համար ունեն խորհրդատվական բնույթ:
16. Աշխատանքային խմբի նիստերն արձանագրվում են Քարտուղարության կողմից: Արձանագրության մեջ ամրագրվում են օրակարգում ընդգրկված հարցերը, մասնակիցների ելույթների սղագրությունը, ինչպես նաև նիստում մշակված առաջարկությունները կամ լուծումները:
17. Աշխատանքային խմբի արձանագրությունը և որոշումները նիստից հետո, երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարությունը տրամադրում է խմբի անդամներին, հրապարակվում է խմբի պաշտոնական վեբ կայքում, սոցիալական ցանցերի էջերում:

III. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԸ

18. Աշխատանքային խմբի ղեկավարը նշանակվում է Հանձնաժողովի որոշմամբ:
19. Աշխատանքային խմբի ղեկավարը`
 - 19.1. կազմակերպում և ղեկավարում է Աշխատանքային խմբի աշխատանքները,
 - 19.2. վարում է Աշխատանքային խմբի նիստերը,
 - 19.3. ստորագրում է Աշխատանքային խմբի նիստերի արձանագրությունները,
 - 19.4. իր բացակայության դեպքում Աշխատանքային խումբը նախագահում է Հանձնաժողովի փոխնախագահը,
 - 19.5. հանձնարարականներ է տալիս Քարտուղարությանը.

- 19.6.բաշխում է պարտականությունները Աշխատանքային խմբի անդամների միջև,
19.7.Ապահովում է սահմանված ժամկետում Աշխատանքային խմբի գործունեության արդյունքների և ընդունած որոշումների մասին զեկույցի ներկայացումը Հանձնաժողով:

IV. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

- 20.Աշխատանքային խմբի անդամներն են, Աշխատանքային խմբին անդամակցելու ցանկություն հայտնած Հանձնաժողովի անդամները, սույն փաստաթղթի 3-րդ կետում նշված «ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովին կից ՓՄՁ երկխոսության հարթակ ստեղծելու» մասին հուշագիր ստորագրած Կազմակերպությունները, ինչպես նաև այն Կազմակերպությունները, որոնք ցանկություն կհայտնեն միանալ Աշխատանքային խմբին և կբավարարեն սույն փաստաթղթով սահմանված չափորոշիչներին:
- 21.Աշխատանքային խմբի կազմում ընդգրկված կազմակերպությունների ներկայացուցիչները չեն կարող հանձնաժողովի անդամների թվից ավել լինել:
- 22.Աշխատանքային խմբի անհատական կազմը հաստատում է Հանձնաժողովի նախագահը:
- 23.Հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ, հանձնաժողովի որոշմամբ Աշխատանքային խմբի անդամի անդամակցությունը կարող է դադարեցվել.
- 23.1. Ազգային ժողովի առնվազն երկու նստաշրջանի ընթացքում Աշխատանքային խմբի նիստերին երեքից ավելի անհարգալի բացակայության դեպքում;
- 23.2. Աշխատանքային խմբի անդամի դիմումի համաձայն;
- 23.3. Սույն Աշխատակարգի 25-րդ կետով սահմանված Աշխատանքային խմբի կազմում ընդգրկվելու իրավունք ունեցող Կազմակերպություններին ներկայացվող չափորոշիչների փոփոխման դեպքում;
- 23.4. Աշխատանքային խմբի աշխատանքներին խոչընդոտելու, Խմբի անդամներին նկատմամբ անհարգալից վերաբերմունքի կամ Աշխատանքային Խմբի անդամների ընդհանուր թվի մեծամասնության առաջարկով:
- 24.Աշխատանքային խմբի կազմում կարող են ընդգրկվել, Աշխատանքային խմբի քարտուղարությանը դիմում ներկայացրած ՓՄՁ շահերը ներկայացնող այն Կազմակերպությունները, որոնք`

24.1. Հայաստանի Հանրապետությունում գործունեություն ծավալող ձեռնարկատերերի կամ ձեռնարկությունների անդամության վրա հիմնված կազմակերպություններ են, կամ դրանց կոալիցիա,

24.2. Վերջին երեք տարիներին ծավալել են ակտիվ գործունեություն, հրավիրել են տարեկան համագումարներ, ժողովներ իրենց անդամ կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցիչների մասնակցությամբ,

24.3. Կազմակերպությունների կամ դրանց կոալիցիայի կազմում ընդգրկված կազմակերպությունների անդամների առնվազն 1/3-ը ՓՄՁ ներկայացուցիչներ են,

24.4. Աշխատանքային խմբում ընդգրկվելու դիմում ներկայացնելու պահին Կազմակերպության կամ կոալիցիայի կազմում ընդգրկված կազմակերպություններին անդամագրված է առնվազն 50 ձեռնարկություն կամ դրանց ներկայացուցիչներ:

25. Աշխատանքային խմբի անդամն նիստերին մասնակցում է անձամբ:

26. Աշխատանքային խմբի անդամն իրավունք ունի՝

26.1. նիստերի քննարկմանը ներկայացնելու հարցեր,

26.2. ներկայացնելու առաջարկություններ օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ:

V. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ

27. Աշխատանքային խմբի գործունեության կազմակերպչական-մեթոդական ապահովումն իրականացնում է Աշխատանքային խմբի Քարտուղարությունը:
28. Քարտուղարությունը կարող է ստանձնել Աշխատանքային խմբի անդամ հանդիսացող Կազմակերպությունների ներկայացուցիչներ, անկախ փորձագետներ:
29. Աշխատանքային խմբի հերթական նիստերի օրակարգի նախագծում ընդգրկված հարցերը մշակում և Աշխատանքային խմբի ղեկավարին է ներկայացնում Քարտուղարությունը: Աշխատանքային խմբի ղեկավարն այն հաստատելուց հետո տրամադրում է Աշխատանքային խմբի անդամներին:
30. Քարտուղարությունը պարտավոր է ապահովել Աշխատանքային խմբի նիստերի քննարկմանը դրված հարցերի վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը, ինչպես նաև հնչեցված առաջարկությունների վերլուծությունն ու ամփոփումը:
31. Աշխատանքային խմբի Քարտուղարության անհատական կազմը հաստատում է Հանձնաժողովի նախագահը:

VI. ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

32. Սույն Աշխատակարգը, դրանում կատարվող փոփոխությունները հաստատվում է Հանձնաժողովի կողմից: